ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ՏՀՏ-1227

ք. Երևան «25»« հունվար» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա.Պողոսյանի, (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 1227 «Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **329 114 600** (երեք հարյուր քսանինը միլիոն մեկ հարյուր տասնչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ), ընդ որում՝

1. 11001 «Էլեկտրոնային կառավարում» միջոցառման գծով՝ 184557300 ՀՀ դրամ,
2.11002 «ՏՀՏ բովանդակություն և հեռավար ուսուցում» միջոցառման գծով՝ 144557300 ՀՀ դրամ,

իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, նախարարությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում տեղեկացնում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 7-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8 չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսում և խնայողություն) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20 -ը:

2.4.9 ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են ՊՈԱԿ-ում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին հարաբերակցությամբ

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահահարաբերությունների վրա և գործում է մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ն ա խ ա ր ա ր ու թ յ ու ն	Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 2 շենք	Երևան, Բուռնազյան 37
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011036721	Հ/Հ 900018005737
Հ/Հ 900011036739	ՀՎՀՀ 01550374
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ա.Պողոսյան
Կ.Տ (ստորագրություն)	Կ.Տ (ստորագրություն)

Հավելված

2022 թ. հունվարի 25-ին
կնքված N ՏՀՏ-1227 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ

«1227. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԵ ԾՐԱԳՐԻ

Իրականացվելիք միջոցառման				
Անվանում	**Կատարման ենթակա գործառույթների նկարագիր**	**Ակնկալվող արդյունքներ և դրանց գնահատման չափանիշներ**	**Վերջնաժամկետ**	**Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)**
«11001. **Էլեկտրոնային կառավարումե**	***Հայկական կրթական ցանցի մշտադիտարկում և սպասարկում***			184 557 300
	1.1. Հայաստանի կրթական ցանցի մշտադիտարկում, կենտրոնական հանգույցի սերվերների սպասարկում՝ արտաքին միջամտություններից ցանցի պաշտպա-նություն, ինտերնետային պարունակության ֆիլտրում, հակավիրուսային պաշտպանություն, ուսումնական հաստատություններին էլեկտրոնային հասցեների տրամադրում	Հայաստանի կրթական ցանցի կենտրոնական հանգույցը անխափան և շուրջօրյա աշխատում է, ապահովելով 1414 ուսումնական հաստատություն-ներին մեկ կենտրոնում միակցելու գործընթացը: Սպասարկվում են ցանցում ընդգրկված բոլոր ուսումնական հաստատությունների էլեկտրոնային հասցեները:	շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում	
	1.2. ՀՀ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի համակարգիչների և ՏՀՏ միջոցների սպասարկում	ՀՀ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի համակարգիչներն ու ՏՀՏ միջոցներն անխափան աշխատում են	ըստ անհրաժեշ-տության՝ ամբողջ տարվա ընթացքում	
	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) գործարկում և ամբողջականացում			
	2.1. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) զարգացում և ամբողջակա-նացում	Գործում են ԿԿՏՀ-ի հետևյալ ենթահամակարգերը. ա) Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ (ԴԿՏՀ) բ) Նախադպրոցական կրթության տեղեկատվական համակարգ գ) Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ	ա) շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում բ), գ) 2022թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	
	2.2. Առաջին դասարանցիների ընդունելության հայտագրման համակարգի կատարելագործում	Հայտագրման համակարգը գործում է անխափան և շահառուների համար ապահովելով հավասար մեկնարկային պայմաններ	ըստ անհրաժեշ-տության և շարունակաբար	

	2.3. Դպրոցներում գործածության ենթակա փաստաթղթերի թվայնացում	Թվայնացված են դպրոցներում պարտադիր գործածության ենթակա 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանով նախատեսված փաստաթղթերից 7-ը	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	2.4. Հանրակրթական ուսումնական հաստատություններում ըստ մակարդակների լիցենզիոն տեղերի բաշխման թվայնացում, ինտեգրում ԿԿՏՀ-ին, https://license.emis.am/	Հանրակրթական ուսումնական հաստատություններում ըստ մակարդակների լիցենզիոն տեղերի բաշխումը թվայնացված է և ինտեգրված է ԿԿՏՀ-ին	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	2.5. Սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների ուսուցիչների կառավարման ենթահամակարգի լրամշակում	Լրամշակված և ներդրված է սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներ ուսուցիչների գործուղման կառավարման ենթահամակարգը	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	2.6. Կրթության առանձնահատուկ պայմանների գնահատման և արձանագրման համակարգի կատարելագործում https://cde.emis.am/login	Համակարգում կատարվել են փոփոխություններ՝ համապատասխան ՀՀ օրենսդրությամբ ներկայացված պահանջների	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	2.7. 12-ամյա կրթության ապահովման տեղեկատվական համակարգի կատարելագործում https://oosc.emis.am	Համակարգում կատարվել են փոփոխություններ, ծրագրային բարելավումներ	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	2.8. Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվող սովորողների https://dimord.emis.am/ համակարգի կատարելագործում	Գործում է դիմորդների հայտագրման կատարելագործված համակարգը	2022 թվականի մայիսի 2-րդ տասնօրյակ
	2.9. Հաշվետվությունների ստացման միասնական հարթակի զարգացում, կատարելագործում	Գործում է հաշվետվությունների ստացման համակարգը	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	3. Կրթության ոլորտի վարչական ռեգիստրի վարում		
	3.1. Հանրակրթության ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի վարում (ԴԿՏՀ միջոցով)	Վարվում է հանրակրթության վարչական ռեգիստրը. տվյալները մշակվել, հաստատված ձևերին ու ժամկետներին համապատասխան ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ և ՀՀ վիճակագրական կոմիտե:	ԿԳՄՄՆ՝ մարտի 2-րդ տասնօրյակ, Վիճակագրական կոմիտե՝ մարտի 3-րդ տասնօրյակ
	3.2. ԿԿՏՀ բովանդակության համապատասխանեցում ՀՀ կրթության օրենսդրության ընթացիկ և Քովիդ 19-ով պայմանավորված փոփոխություններին	Կազմվել են հարցաթերթեր, ձևավորվել ընտրանք, բոլոր պետական դպրոցներին բաշխվել են իրենց համապատասխան էլեկտրոնային հարցաթերթեր: Լրացված հարցաթերթերի հավաքագրումից հետո մաքրվել են SPSS բազաները, ճշգրտվել և լրամշակվել են տվյալները:	շարունակաբար՝ տարվա ընթացքում
	ՀՀ կառավարության 2021-2026թթ. միջոցառումների ծրագրով 2022 թվականին նախատեսված թվայնացման գործառույթներ		

	4.1. Պետական բյուջեից ֆինանսավորվող հանրա-կրթական ուսումնական հաստատությունների դասագրքերի պատվերի ձևավորման և բաշխման գործընթացների թվայնացում («Կրթությունե բաժնի 2.1 միջոցառում)	Պետական բյուջեից ֆինանսավորվող հանրակրթական դասագրքերի պատվերի ձևավորման և բաշխման գործընթացների մոդուլը ներդրված է ԴԿՏՀ-ում	2022 թվականի մայիսի-ի 3-րդ տասնօրյակ	
	4.2. Ավարտական փաստաթղթերի թվայնացում	Մշակված և ներդրված է հանրակրթական ուսումնա-կան հաստատությունների 9-րդ և 12-րդ դասարան-ների շրջանավարտների Ediploma ավարտական փաստաթղթերի էլեկտրոնային համակարգը	2022 թվականի հունիսի 2-րդ տասնօրյակ	
	4.3. Առարկայական ուսուցիչների պակաս ունեցող դպրոցներում տվյալ առարկայի էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդնում, էլեկտրոնային ուսուցման գործիքների զարգացում	Աջակից դպրոցների կողմից իրականացվում է առար-կայական ուսուցչի խնդիր ունեցող դպրոցների աշա-կերտական համակազմի համար տվյալ առարկայի էլեկտրոնային ուսուցում, էլեկտրոնային ուսուցման գործիքները կատարելագործված են	2022 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ	
	5. Օժանդակող և հարակից գործառույթներ			
	5.1. ԿԿՏՀ ենթահամակարգերը շահագործող ուսում-նական հաստատությունների ներկայացուցիչների վերապատրաստումների կազմակերպում	Վերապատրաստվել են ԿԿՏՀ-ն շահագործող ուսումնական հաստատությունների մասնագետները	պարբերաբար՝ տարվա ընթացքում	
	5.2. «Աջակցությունե կայքի շահագործում (կրթության ոլորտի բոլոր շահառուների համար): ԴԿՏՀ-ում ներգրավված շուրջ 1400 ուսումնական հաստատություններին աշխատանքային օրերին և ժամերին աջակցության տրամադրում ծրագրային և տեխնիկական խնդիրների լուծման համար	Շահագործվում է «Աջակցությունե կայքը՝ կրթության ոլորտի բոլոր շահառուների համար, որը պարունակում է տեսադասեր, ուղեցույցեր և աջակցող նյութեր ԿՏԱԿ-ի կողմից շահագործվող բոլոր համակարգերի մասին	պարբերաբար՝ տարվա ընթացքում	
	5.3. Բոլոր գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ՏՀՏ կարիքի ուսումնասիրության վերլուծություն և առաջարկների փաթեթի մշակում	ՀՀ դպրոցներում իրականացվել է տեղեկատվահա-ղորդակցական տեխնոլոգիաների համալրվածության և կիրառության ուսումնասիրություն	2022 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ	
	5.4. ԴԿՏՀ միջոցով հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ տարբեր վերլուծությունների իրականացում	ՀՀ ԿԳՄՍՆ կներկայացվի տարեկան ամփոփ տեղեկատվությունը:	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	

	5.5.ՀՀ ԿԳՄՍՆ, ՀՀ ՖՆ, ՀՀ վիճակագրական կոմիտե, «Կրթական ծրագրերի կենտրոնե ԾԻԳ, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ, ՅՈՒՆԵՍԿՕ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ), ՋԼՄ-ներին, ԱԺ պատգամավորներին և պատգամավորական խմբակցություններին, այլ շահագրգիռ կազմակերպությունների կտրամադրվեն հանրակրթության ոլորտը բնութագրող տեղեկատվություն՝ ամփոփ տեղեկանքներ, վիճակագրական տվյալներ, աղյուսակներ և այլն: Վիճակագրական և այլ հաշվետվություններ, ամփոփ տեղեկանքներ՝ ըստ ՀՀ մարզերի, գյուղական և քաղաքային համայնքների, աշակերտների և ուսանողների թվաքանակների, հաստատությունների տիպերի, կրթական ծրագրերի աստիճանի և ըստ այլ անհրաժեշտ չափանիշների:	Հավաքագրված տվյալները մշակվել, վերլուծվել են (ստանդարտ ավտոմատացված և բովանդակային) և տրամադրվել է տեղեկատվություն, պատրաստվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական հաշվետվություններն ու զեկույցները:	ըստ անհրաժեշ-տության՝ տարվա ընթացքում	
«11002. ՏՀՏ բովանդակությունն և հեռավար ուսուցումն	***ՏՀՏ բովանդակության շարունակական ապահովում և զարգացում***			144 557 300
	1.1. Հայկական կրթական միջավայրե պորտալի, «Հայկական կրթական միջավայրե ֆորումի, «Պաշարների շտեմարանե և «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներե կայքերի աշխատանքների համակարգում, բովանդակային պարունակության հարստացում,	«Հայկական կրթական միջավայրե ֆորումում (http://forum.armedu.am) կազմակերպվել են ավելի քան 70 կրթական քննարկումներ, որոնցից առնվազն 50-ը՝ մասնագիտական խորհրդատվական թեմաներ, «Պաշարների շտեմարանե կայքում (https://lib.armedu.am/) տեղադրվել են առնվազն 500 էլեկտրոնային կրթական պաշարներ, eTwinning Plus ծրագրի (http://etwinningplus.armedu.am) և «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներե (http://esource.armedu.am/) կայքերը անխափան աշխատում են: Իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքի (https://escs.am/) բովանդակային մասի անգլերեն և ռուսերեն լեզուներով թարգմանությունը, կտեղադրվեն նյութերը:	շարունակաբար՝ տարվա ընթացքում	

	1.2.ՀՀ ուսումնական հաստատությունների կայքէջերի տեխնիկական սպասարկման և խորհրդատվական աջակցության իրականացում	բոլոր դպրոցներին տրամադրվել է խորհրդատվական աջակցություն՝ դպրոցական կայքերի (https://schoolsite.am/) վարման նպատակով	շարունակաբար՝ տարվա ընթացքում	
	1.3.ԿՏԱԿ-ի հեռավար ուսուցման համակարգերում ուսուցիչների հեռավար վերապատրաստումների կազմակերպում	«Հեռավար ուսուցումե համակարգերում (http://learning.armedu.am/ և https://dlc.armedu.am/) կազմակերպվել են վերապատրաստման դասընթաց-ներ. շարունակվել են «Ուսումնական գործընթացի կազմակերպման առցանց միջոցներե թեմայով (2 անգամ, շուրջ 200 ուսուցիչների համար) և «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններե թեմայով (2 անգամ, շուրջ 200 ուսուցիչների համար) վերապատրաստումները, կազմակերպվել են կարճատև նոր վերապատրաստումներ (6 տարբեր վերապատրաստումներ՝ առցանց պաշարներ ստեղծելու և ստուգում-գնահատում կազմակերպելու ՏՀՏ գործիքների ուսուցում թեմաներով), բացի այդ, հեռավար դասընթացի հմտություններին տիրապետող տարբեր առարկաների մասնագետներ առնվազն 20 հեռավար դասընթացներ են կազմակերպել շուրջ 400 գործընկեր-ուսուցիչների համար,	շարունակաբար՝ տարվա ընթացքում	
	2.Հեռավար ուսուցման կազմակերպում			

	1.4. Հեռավար ուսուցման կենտրոնի աշխատանքների կազմակերպում՝ ապահովելով աշակերտների կրթություն ստանալու իրավունքի իրացումը՝ հավասար, որակյալ և ներառող կրթական համակարգ ունենալու նպատակով: 1.5. «Էլեկտրոնային դասավանդում.մենթոր դպրոցներե ծրագրի շարունակական բարելավում՝ մարզային դպրոցներում բացակա ուսուցիչների խնդիրը լուծելու նպատակով	«Էլեկտրոնային դասավանդում.մենթոր դպրոցներե ծրագիրը շարունակական իրականացվել և բարելավվել է հետևյալ ուղղություններով մենթոր դպրոցներում ներդրվել, չափվել, գնահատվել և մշտադիտարկվել են էլեկտրոնային կրթության որակի ապահովման մշակված մեխանիզմները, մենթոր դպրոցների թիվն ավելացել է առնվազն 30%-ով, պատվիրատու մարզային դպրոցներում հեռավար իրականացվող դասաժամերն ավելացել են առնվազն 20%-ով, շարունակական խորհրդատվական և համակարգման աջակցություն է ցուցաբերվել պատվիրատու և մենթոր դպրոցներին, ստուգվել են մարզային դպրոցներում հեռավար դասերին մասնակցող աշակերտների ընտրանքային խմբի գիտելիքները, զարգացվել են մենթոր դպրոցների էլեկտրոնային դասավանդման կարողությունները. էլեկտրոնային դասավանդման կարողությունների տիրապետող ուսուցիչների թիվն ավելացել է առնվազն 30%-ով: Հայաստանի Հանրապետության 10 մարզերի շուրջ 1000 դպրոցների ներկայացուցիչների համար իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝ ՏՀՏ հմտություններ, հեռավար ուսուցման մի-ջավայրեր ու հարթակներ, կառավարման համակարգեր և մասնավորապես՝ ԴԿՏՀ-ի աշխատանքի (ներառյալ էլեկտրոնային մատյան, օրագիր) կազմակերպում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ծրագրային սպասարկման աշխատանք և խորհրդատվության տրամադրում՝ Մենթոր դպրոցների ծրագրում ընդգրկված դպրոցների համար:	շարունակաբար՝ տարվա ընթացքում	
	1.6. «Շարժական ինտերնետային-համակարգչային կայանե-ի (ՇԻՀԿ) շահագործում		շարունակաբար՝ տարվա ընթացքում	

	ԵՄ «Ի-թվինինգ+ե ծրագրին մասնակցություն			
	. Կհամակարգվեն կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրերը: Կապահովվի Եվրամիության Իթվինինգ Պլյուս ծրագրի շարունակականությունը: Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրերի համակարգման և տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով կկազմակերպվեն հանդիպումներ, քննարկումներ, կիրականացվեն համատեղ աշխատանքներ:	Համակարգվել է Իթվինինգ Պլյուս ծրագրում ընդգրկված շուրջ 620 ուսումնական հաստատությունների 2000 դասավանդողների աշխատանքը, ծրագրում ներգրավվածությունը ավելացվել առնվազն 10%-ով: Ապահովվել է մասնակցություն ՏՀՏ բնագավառի միջոցառումներին, աշխատանքային քննարկումներին, տրամադրվել տեղեկատվական աջակցություն, ներկայացվել են ԿՏԱԿ-ի ծրագրային հիմնական ուղղությունները:	շարունակաբար՝ տարվա ընթացքում	
Ընդամենը				329 114 600

Ն ա խ ա ր ա ր ու թ յ ու ն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011036721
Հ/Հ 900011036739
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

_____ Վ. Գասպարյան

Կ.Տ. (ստորագրություն)

Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Բաղրամյան 37
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005737
ՀՎՀՀ 01550374

Տնօրեն՝

_____ Ա. Պողոսյան

Կ.Տ. (ստորագրություն)